

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսի մէջ 1 ՄԶԸ.
Վեցամսեայ Կ. Պոլսի մէջ 1 ՄԶԸ.
Պատահական տուրք մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար գատ սակարկութիւն կըլ-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-
ած արժեքը խորագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խորագրի
— Տնտեսական տնտեսական շա-
տկան 198 : Եւրո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրուած արժեքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :

ՊԱՅՄԱՆՔՈՒԹՅԱՆ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական լուրերն այս օրերս
չիօթ կերպարան մը կառնուն : Նախ
կըսուէր թէ Պիսմարք իշխանին առա-
ջարկութեան վրայ տէրութիւնները
Բ. Դրան գիտողութիւն պիտի ընեն
Գարատաղի և Յունաստանի նկատ-
մամբ Պէրլինի գաղափարութեան ան-
գործադրութեան համար, և թէ
Ունգարիա այս առաջարկութեան հա-
ւանութիւն չտար : Յետոյ զրոյց ե-
լաւ թէ այս առաջարկութիւնն ետ
մնացեր է կամ չէ յաջողեր : Թերեւս
ստոյգն այս է որ Մէհմետ Ալի փա-
շային Ալպանիա զրկուելուն և այս-
պիսի բարձրատիման պաշտօնատա-
րի մ'եղերական մահուամբ վախ-
ճանելուն վրայ Բ. Դրան գաղափար-
ութիւնը գործադրելու ջանքն ու
փափաքը հաստատուած է, և տեղի
չկայ ըսելու թէ գաղափարներ կը քա-
ջարեն իսլամաց ապստամբութիւնը :
Մէհմետ Ալի փաշային պաշտօնն էր
Պէրլինի գաղափարութեան համեմատ
Գարատաղի սահմանագրութեան ուղղե-
լու համար Ալպանիացիներն համա-
ղել : Սակայն Ալպանիացիք արիւն-
ուշտ կերպիւ հաստատեցին թէ ի-
րենք այնպիսի յորդոյներով ու հա-
մագումներով զինուած չեն ընել, և
այսօրուան օրս բոլոր Ալպանիա ըն-
դարձակ անիշխանութեան ասպարէզ
եղած է : Ալպանիական միութիւնն,
որ կանոնաւոր կառավարութեան
տեղ անցած է, Յունաստանի հոգ
տարու որոշման ևս գիտողութիւն
պիտի ընէ : Պիսմարք և Հէրզէք մէջ,
թէ և Աւստրիացիք մեծ գործութիւն
թափած են, ապստամբութիւնն ա-
մեն տեղ լերանց գազաթմերու և
կիրճերու, նոյն իսկ շատ մը գիւղե-
րու և քաղաքներու մէջ կը տիրէ, և
հաղիւ տեղ մը կը խաղաղի, միւս կող-
մը կը ճարակի : Ենէնի-Պազարի դա-
ւառը բոլորովին ապստամբաց ձեռքն
է, ուր իրենց բանակը մինչև քառ-
սուն հազար հաշիւ կըլլար : Պիսմարք
վրայ պատերազմ կըլլայ : Չախ զօրա-
վարն յետոյ նահանջելէ ետեւ՝ նորէն
յարձակողական սկսել և Պիսմարքի
առաջացեալ գիրքերէն երկուքը գը-
րաւեր է :

Հելլենական կառավարութիւնն
օգոստոս 28 (սեպտ. 7) թուով դաշ-
նագիր տէրութեանց չըջարեական
մը գրեց, որով կը ծանուցանէ թէ
Պէրլինի վեհաժողովին * (քօնիլէ)
երեքտասաներորդ ատենագրութեան
մէջ արձանագրուող որոշման վրայ
յուլիս 5/17 թուականաւ Բ. Դրան

* Այս բան ընտրեցիք իրեւ թարգ-
մանութիւն Բենիէ-բառին :

ծանուցողի մ'ուղղած է, խնդրե-
լով որ Հելլենական կառավարութեան
վերատեսչաց հետ միաբանութեամբ
յիշեալ որոշումը գործադրելու հա-
մար իւր կողմէ ալ վերատեսչաներ
կարգէ : Աթէնքի կառավարութեան
այս ընթացքն այն խորհրդածութեամբ
եղած էր թէ Դուռը վեհաժողովին
որոշումը չմերժեր : քանզի Պէրլինի
գաղափարութիւնն ստորագրելով 24րդ
յօդուածին մէջ պարունակեալ հոգ
տարու սկզբունքն այ պաշտօնագրե-
նդունած էր : Բայց 13րդ ատենագ-
րութեան նկատմամբ Բ. Դրան պատ-
ուիրակներուն ըրած մերժողական
յայտարարութիւնները վերջիչեալ
ստորագրութիւնը ըրած էին : Հելլե-
նական ծանուցողին ներկայանալէն
ի վեր ամիսուկէս անցեր, և Բ. Դու-
ռը բնաւ պատասխան չէ տուել Յու-
նաստանի կառավարութեան : Աթէն-
քի նախարարութիւնն ալ այս երկար
լուծութիւնը մերժում մը համարելու
պարտաւորուել էր, և այս վիճակն
իւր վրայ ծանր պատասխանատուու-
թիւն կը դնէր : Ուստի առիթ տա-
լու համար Մուլմանին կառավարու-
թեան որպէս վեհաժողովին որոշ-
մանց նկատմամբ իւր գիտողութիւնն
յայտնէ, Մեծ-Եպարքոսին հեռագիր
մը հաղորդել է Կ. Պոլսոյ Հելլենա-
կան գեղականին միջոցաւ օգոստոս
19/31 երկուշաբթի օրն, որով Պ. Բուռ-
տուրիօթի հրաման եղած էր յուլիս
5/17 ծանուցողին վճռական պա-
տասխան մը խնդրել Մեծ-Եպարքո-
սէն՝ մինչև սեպտ. 6 ուրբաթ օրը :
Պ. Բուռտուրիօթի պիտի յայտարա-
րէր նաև բարձրագոյն Միջովէթ փա-
շային թէ Հելլենական կառավարու-
թիւնը Բ. Դրան լուծութիւնն իրեւ
մերժում նկատելով մեծ տէրութեանց
գիմելու հարկին մէջ պիտի դառնուի՝
ըստ 24րդ յօդուածոյ Պէրլինի գաշ-
նագրութեան, որ իրաւունք տուած
է անոնց միջնորդելու, եթէ Բ. Դու-
ռըն Յունաստանի առաջարկութե-
նէն ետեւ՝ վերջիչեալ ծանուցողին
ստորագրական պատասխան չտայ :
Մեծ-Եպարքոսը նախարարաց հետ
խորհրդակցելէ և Սուլթանին հրա-
մանն ստանալէ ետեւ՝ պատասխանեց
Պ. Բուռտուրիօթի թէ Աթէնքի Օս-
մանեան գեղականին հրաման տրուած
է Բ. Դրան պատասխանը ծանուցա-
նելու, և թէ այս նպատակաւ ֆո-
թիատէս պէյին զրկուած նամակին
մէջ կառավարութիւնը կը ծանուցա-
նէ թէ չկրնար Յունաստանի առա-
ջարկութեան պատասխանել՝ մինչև
որ տէրութեանց ուղղած յիշատա-
կագրին պատասխան չտանայ :

Հելլենական կառավարութիւնն
այս պատասխանը պարզապէս մեր-
ժողական կը համարի, որով երկու
կառավարութեանց մէջ չկրնար հա-
մաձայնութիւն գոյանալ վեհաժողո-

վին որոշմանց գործադրութեան մա-
սին : Ուստի կը կարծէ թէ վայրկեանն
եկած է տէրութեանց գիմելով խնդ-
րելու որ ըստ 24րդ յօդուածոյ դաշ-
նագրութեան՝ իրենց միջնորդութեան
իրաւունքն ի գործ դնեն :

Հելլենական կառավարութիւնը
Բ. Դրան առ մեծ տէրութիւնն ուղ-
ղած յիշատակագրէն պաշտօնագրե-
տեղեկութիւն չունի, ուստի չկրնար
ըսել թէ արդեօք Բ. Դուռը պատաս-
խանի սպասելու իրաւունք ունի՞,
բայց տէրութեանց միջնորդութիւնը
խնդրել չկրնար արգելք լինիլ այն
պատասխանին : Հետեւեալ Պ. Տէլի-
եանի կը հրաւիրէ Հելլենական գե-
ղականներն, որպէս զի մեծ տէրու-
թեանց արտաքին գործոց նախարար-
ներուն հետ տեսակցելով խնդրեն որ
գաղափարութեան համեմատ իրենց
միջնորդութեան իրաւունքն ի գործ
դնեն :

Այս ծանուցողին տէրութեանց
կողմէ տակաւին ինչ պատասխան տը-
րելի յայտնի չէ : Պ. Պիսմարք իւր սո-
վորական աղբուրութեամբ խօսելով
թայմի թղթակցին յայտարարած էր
թէ՝ Յունաստան տկար լինելուն, Բ.
Դուռը չպիտի զիջնի անոր խնդիրը
կատարելու : Իրօք այնպէս եղաւ, և
եթէ ստոյգ է որ Պիսմարք իշխանին
առաջարկած միջնորդութիւնն ետ մը
նացած է, Հելլենական խնդիրն ան-
սահման կերպիւ կը յապաղի : Ռու-
սիա մեծ համակրութիւն չէր ցուցը-
նէր Հելլենաց, քանի որ ատենը Սլաւ-
եան միութեան գաղափարին դէմ՝
կանչուրաւ սկսան, և իրենք իրենց
անկախ գիրք մը բռնելով՝ Բիւզանդ-
եան պետութիւնը վերահաստատելու
ծառայել միայն ուղեցին : Այնուհե-
տեւ Աթէնք ոչ ևս Բեզարպուրկի մէկ
ճիւղն եղաւ : Հելլենք եւրոպիոյ և
մանաւանդ Սլաւոյ առաւել միտում
կը ցուցնէին : Երբ Պ. Տէլիեանի Պէր-
լինի վեհաժողովէն ետեւ Եւրոպիոյ
մայրաքաղաքները շրջելով Բեզար-
պուրկ հասաւ, Ռուսաց կայսրը սըրտ-
նեալ կերպիւ ընդունեց զայն, և
Ռուսիոյ նկատմամբ Հելլենաց ապա-
շընորհութիւնը յիշեցուց, ծանուցա-
նելով միանգամայն թէ Ռուսիա չը
պիտի գաղթէր սակայն Յունաստանը
պաշտպանելէ : Իսկ Ռուս նախարարը
ցուրտ ընդունելութիւն ըրած էին Պ.
Տէլիեանի : Արդեօք Ռուսիա հիմայ
իւր բարձր պաշտպանութիւնն իրօք
ի գործ պիտի դնէ՞, ասոր բայցայտ
մէկ նշանը չտեսանք տակաւին, թէ
և մայրաքաղաքիս մէջ անգամ՝ Հել-
լենքեր կրնային դառնուիլ, որք կը սի-
րէին յուսալ թէ Ռուսական զօրքը չը
պիտի մեկնի Կ. Պոլսոյ չըջակայներէն՝
մինչև որ Եանեան Յունաստանի չը
յանձնուի : Բայց ահաւասիկ Ռուսք
կը մեկնին Այթթէֆանուէն՝ առանց
Եպիքոսի կամ Թեսալիոյ խօսքն ընե-

լու, և բաւական կը համարին միայն
իրենց շահերուն վերաբերեալ կէտե-
րու գործադրութիւնը ձեռք բերելու
Պաթումն՝ որուն այնչափ կը փափա-
քէին՝ իրենց ձեռքն է, Պուլլարիոյ
ինքնօրինութիւնն, որ իրենց գլխա-
ւոր նպատակն էր : Հաստատուած է-
և թէպէտ Պուլլարիա երկուքի բաժ-
նուեցաւ, բայց Ռուսմանիա ևս ժա-
մանակաւ այնպէս էր : Բայց մեզ՝ մեծ
տարբերութիւն չկայ երկու Պուլլա-
րիաներուն մէջ, քանի որ Տօնուքօֆ-
ֆօրսաքօֆ իշխանը Ֆիլիպպի մէջ, որ
Արեւելեան Ռուսիոյ մայրաքաղաքը
պիտի ըլլայ, Պուլլարաց աղբային նո-
րակազմ զօրաց հանդէս կատարել տա-
լով, զինուորական արուեստին մէջ ա-
նոնց ըրած արագ յառաջդիմութեան,
ինչպէս նաև Պուլլարաց ցոյց տուած
քաղաքործութեանց վրայ Չարին գո-
հանակութիւնն յայտնեց, Միլթէ նոյն
անձը չէ՞ր որ անցեալներն յիշեալ բա-
ժանման դէմ բողոքելու նպատակաւ
եկած Պուլլար պատուիրակներն ըն-
դունելով յայտարարած էր թէ Ռու-
սիա բարձրացած էր որ Պուլլարիա կա-
րելի եղածին չափ մեծ ըլլայ, սակայն
Եւրոպա չէր թողուցած : Բայց հոգ-
չէ, Պուլլարք թող իմաստութեամբ
շարժին, Ռուսիա հուսկ ուրեմն ի-
րենց արտօնութիւններն տուել կըն-
դարձակէ : Ռուսման Ռուսիա իւր բո-
լոր աղբեցութիւնը Սլաւեան շահուց
համար միայն ի գործ կը դնէ՞ Ս-
րեւելեան քրիստոնեայները պաշտպա-
նելու խաբուսիկ խօսքերով : Չար-
մանք է միթէ որ իրեն նուիրեալ
թերթեր Հայոց խնդիրը խմբեն, իբր
թէ Հայք իրաւունք իսկ չունին անձ-
նական ապահովութիւն խնդրելու,
և Հայ երիտասարդութիւնն անար-
գեն ու զրպարտեն անյուր սուտե-
րով իբր թէ մոլեղնութեան և յիմա-
րութեան մէջ ինկած է : քանզի Ռու-
սիա կուզէ որ Հայք իրենց լուծը միայն
փոխեն՝ առանց ազատութեան երես
տեսնելու, և միշտ գերի մնան :

Ռուսական կօշտ յրագիրը կարի-
նէն օգոստ. 27 թուով քաշուած հե-
տեւալ հեռագիրը կը հրատարակէ :

Երէկ կարէն Լազարէֆ զօրա-
պետին մէկ յայտարարութիւնն առ-
նուեցաւ ուղղեալ առ Հայ ժողովուր-
դաւ կարնոյ կուսակալութեան թուր-
քիոյ մնացած մասին, որոյ յորդոր
կը կարգայ չհետեւիլ խմբովին Ռու-
սիա գաղթելու անխորհուրդ գաղա-
փարին, այլ ընդհակառակն՝ իրենց
տեղը մնալ առանց բնաւ վախճալու
Ռուսական զօրաց մեկնելուն հետե-
ւանքէն :

Կը յուսացուի որ այս յորդորը,
կարնոյ կառավարին և Հայ կղերին
ձեռք առած արգելիչ միջոցներուն
հետ միանալով՝ Հայ ժողովրդեան
գաղթելու քիտաւորութիւնը կարգե-

ՀԱՅԱԹԱՆ ԿՕՐԾ ԽԱՆՆ